


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱՇԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզիպոսի համար տեղի. ողջ դի. 80
» » վեցամսեայ » 50
Օսար երկիրներ տեղի. Թրակի 25
» » վեցամսեայ » 14
Թղթարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է:

Խմբագրութեան ուղղումն նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

ԱԶԳԱՅԻՆ ՄԸ ՅՈՒՐՁԸ

Տեսակ մը մարդիկ շատ աղմուկ հանե-
ցին ծոյր բառին առթիւ զոր մեր աշխատա-
կիցներէն մին գործածած էր իր մէկ յօդուա-
ծին մէջ, Եգիպտոս եկող հայ գաղթական-
ներուն վրայ խօսած պահուն:

Դրական պոլիթիկ մը ատկէջ յառաջ
եկաւ և մենք մեր այս փոքրիկ ծառային մէջ
այնքան տեղ տուինք այդ խնդրոյն որքան
պէտք չէր որ տրուէր:

Մէկը՝ գաղթականներուն ըսաւ.

«Տղաք, ծուլութիւն կընէք կոր, այս
երկրին մէջ կարենալ ապրելու համար աշխա-
տելու է, աշխատելու է միշտ, չարտաք,
չարունակ:

«Հոս Պոլիս չէ, հոս հայ մը հանելը աւե-
րի դիւրին է. Յանձնաժողովներէն բան մի՛
սպասէք, նայեցէք որ ձեր ձեռքով դուք ձեր ճա-
րը նայէք, ձեռներեց եղէք, Եգիպտոսի ժողո-
ւորդը ձեր գիտցած տաճիկները չեն զորս
երկու բառով կարելի է համարել և գործեր-
նիդ քաղցնել: Հոս աշխատութիւն, խելք,
հնարագիտութիւն պէտք է:»

Իսկ միւսը ըսաւ, «Ախպրատանք, աշխա-
տի՛ր մի, մեղքը չէ՞ք, դուք ձեր ինչքը, ազ-
գականները կորուսիք, յուսահատ էք, սըր-
տերնիդ կորած է, այս երկրին կրման
տար է, կը քրտնիք: աղաները հարուստ են,
թող ձեզ նային, օգնեն, կերակրեն, յուսա-
հատ մարդը աշխատիլ չի կրնար, հոգ մի՛ ը-
նէք, եկեղեցւոյ բակին մէջ շարունցէք, նըս-
տեցէք, տեսները ետքը ինչ կըլլայ: Իսկ դու
գառաօն բարեկամ, քեթախ մէկ կողմ նետէ,
այդ արհեստին մի՛ վարժուիր, հարկը
փրանքը մերժէ, ա՛ւ քալէ, որո՛հետեւ...
որովհետեւ և փողոցին մէկ մայթէն միւսը ան-
ցած միջոցիդ կառքեր, պիտիք լինեն կրնան
անցնիլ, գաւաթներդ կրնան կորել, կը յոգ-
նիս, մեղքը չէ՞ս:»

Մենք այն հայերը կը սիրենք որոնք ի-
րենց տղուն կ'ըսեն. «Ո՛րդեակ, ես հարուստ
եմ թէեւ, բայց այդ հարստութիւնը ձեռք
բերելու համար տալիս երով և տալիս երով
աշխատած, տանջուած, չարչարուած եմ: Ար-
դար չէ որ դու իմ կարողութենէս օգտուե-
լով տանք անկիւնը նստիս և քու խեղճը ը-
նես: Գնա՛ ուրեմն, հակառակ ամեն դժուա-
րութեանց, աշխատէ, տքնէ, մոռցիլ թէ հա-

րուստ հայր մը ունիս, և քու հայրդ ճակ-
տիդ քրտնեղով վատակէ: Ինձմէ բան մի՛ ըս-
պասեր:»

Բայց ի՞նչ պիտի ըսէինք հօր մը եթէ իր
տղուն ըսէր. «Օղորտմ, մեղք ես, դուն այս
տաքերուն, փողին, կառքերու երթեւեկին
մէջ չես կրնար աշխատիլ, յոգնութեան, սո-
խառութեան չես դիմանար. սիրագ կոտ-
րած է. ես հոս չեմ. դուն կեր խմէ, և եթէ
կը նեղանաս, Ընկերութեան սրճարանը գնա՛
և օտանալը մը կամ ժրէնիկ փաշաճը մը նե-
տէ, հայտէ օղորտմ:»

Թէ այս երկու հայերէն ո՞րը լաւ է, ոչ
դուք ինձ հարցնելու պէտք ունիք, ոչ ալ ես
ձեզի:

Հրապարակագրի նուիրական պարտքերը
անդիտանալ չէր Դեպի Պոլիսի առաջին յօդ-
ուածը հրատարակելին: Երկրորդն ալ հրա-
տարակցինք ցուցանելու համար թէ աշխար-
հիս վրայ և մանաւանդ թերթերու մէջ, ա-
մեն գաղափար ազատութեան կրնայ մէջ տեղ
գրուիլ, բաւական է որ վայելուչ ձեւի մը
տակ երեւայ:

Իսկ եթեմագրել թէ «ժող» բառով ամբողջ
հայութիւնը ըսանալ ուղուցաւ, ատիկայ
սխալ է: Պատճառ մը չկայ կարծելու թէ
մենք՝ այսպէս մեկնել ուղղութեան նուազ կը
սիրենք և կը յարգենք մեր ազգը. և իրենցմէ
նուազ կը ճանչնանք զայն:

Բայց երբ անտանկ պղծիլ և աննշան մի-
ջագէտի մը համար կ'եղան կը պոռան թէ՛
իրենց ազգասիրութիւնը և արժանապատու-
ութիւնը վիրաւորած ենք, — մենք ալ մեր
կողմէն կ'ըսենք թէ շատոնց է որ ազգասի-
րութեան փայտիկներ չեն հաւատար և
թէ նշանակութիւն չունին մեզի համար խան-
ութի այդ հերոսները:

ՖԵՐՏԻՆԱՆ ՏԸ ԼԵՍԷՄԻ ԱՐՁԱՆԸ

Միւսիկ ջրանցքին բաժնետէսը ընդհանուր
ժողովն, ինչպէս կը յիշուի, իր վերջին նիստին մէջ
երկու հարիւր յիսուն հազար Փրանքի գումար մը
բաժնարկեց Ֆերտինան տը Լէսիւրի արձանը կանգ-
նելու համար ջրանցքին բերանը: Այս յիշակերտի
չնոթիւնն յանձնուած է Փրանսացի արձանագործ
Պ. Ֆրէմիլի որ կը յուսայ այդ աշխատութիւնը
աւարտել ութ ամսէն, այնպէս որ արձանին բաց-
ման հանգիստ պիտի գուցադիւր ջրանցքին բացման
երեսնամեայ տարեգարծին հետ:

Արձանը պիտի կանգնուի ծովին մէջտեղ. կրա-
նիւղէ խալիսի մը պիտի շինուի, ջուրին մակերեսէն
եօթը մէկը բարձր, գագաթը վեց բաւական

մէկը տարածութեամբ սրուն վրայ պիտի գետեղուի
սրտունդանը: Այս պատուանդանն ալ, իր կար-
գին, պիտի ունենայ եօթը մէկը բարձրութիւն ու
Լէսիւրի արձանը՝ վեց մէկը ութսուն: Ամբողջօ-
թիւնը չորսյարկանի տան մը բարձրութիւնը պիտի
ունենայ և արձանը՝ բնակարանի բնակարանի մեծու-
թիւն: Հոյակապ շինուածք մը պիտի ըլլայ:

Պ. Ֆրէմիլի ծրագրին համեմատ, Ֆերտինան
տը Լէսիւր ներկայացած է ոտքի վրայ, եւրոպա-
կան տարազով, բայց ուսերուն վրայ ձգուած
լայն թեղանիւթերով փոփոխական պտուղով մը: Մէկ
ձեռքը բռնած է իր աշխարհաշէն գործին յատու-
կածքը ու միւսովը ջրանցքը կը ցուցունէ: Աչքերը
ծովին սեւեռած է, հեռուն:

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԴՐԱՄԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Յունաստանէ պահանջուելիք պատերազմական
տուգանքին գումարը որոշելու պաշտօնով Կ. Պոլսոյ
դեսպանատանց կողմէ կազմուած յանձնաժողովին
հաղորդուած տեղեկութիւններուն նայելով, Թեսա-
լիոյ տարեկան եկամուտն է 40 միլիոն տրակա ռ-
բուն և միլիոնը կը ծախսուի այդ պահանջին վար-
չութեան: Հունները բնայինը եղած են: Պատե-
րազմի ծախքը կը հաշուի 36 միլիոն, որուն վրայ
կ'աւելնայ նաեւ Թեսալիոյ, Եպիրոսի ու Կրէտի
յայն փոխտոտականներուն համար եղած ծախքը, մո-
տաւորապէս երեք միլիոն: Ասոնցմէ զատ, զօրքե-
րուն զէնքի կոչուելով՝ հանրային հասցիները մե-
ծափս խորուած են: Այս կերպով, հիւլէն կառա-
վարութեան եկամուտները, 1897 տարւոյն մէջ,
100ին 40 պոստոն կը հաշուին և 65 միլիոնը չեն
անցնիր, մինչդեռ ծախքը կը հաշուի 135 միլիոն
տրակա ռ: Այս բայց մասամբ պիտի գոյտի 40 մի-
լիոն ներքին փոխառութեամբ մը. կառավարութիւ-
նը պարտաւոր է նաեւ 40 միլիոն ճարեթեւաբան
ցիները վերահատուակելու համար իրենց կիսուեր
բնավայրին մէջ:

Ելնտոսիսն այս նեղ կացութեան հանդէպ, ո-
րուն մանրամասնութիւնները ձգուած են կառավա-
րական տուեալներէն, Յունաստան կը խնդրէ եւրո-
պական Տրակիաններէն որ հրաժարին պատերազ-
մական տուգանք պահանջելու գաղափարէն, բանի
որ Թուրքիան էր պատերազմ հրատարակողը և բա-
նի որ, ասիկց զատ, Առաջիկայ տարւոյն գործոց նա-
խարար Մուրադի Գիւմաին չրջարեականը յայտա-
բարէր թէ պատերազմող կողմերէն ոչ մէկուն թոյլ
չի պիտի տրուի օգտուիլ իր յաջողութիւններէն:

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

Դադափար մը տալու համար Եգիպոսի
ազգայիններուն, քէ որքերու խնդիրը ի՞նչ
ինկնաքեր հոգածութեան առարկայ եղած է
հայաբնակ ամեն կեդրոններուն մէջ, յիշեմ
միայն՝ անցագոյն ֆակի մը իրողութիւններ:

Ռոսոսքոյի մէջ, յատկապէս Յաննապոլիսի
մը ձեռքով, Ռոսանց մը կը հաստատուի 20
տղայ պահելու համար:

Մանկապի եկեղեցւոյն մէջ, պատրաստ-
փակն կոնդակը կարգաւորեցէն ետք, 30 ու-
կի հանգանակուեալ ու Իգնիւսի Առաջնորդա-
րանը դրկուեալ է:

Էնկիւրիի առաջն. նոր տեղապահը կը
պատրաստուի Որբանոց մը հաստատել տեղ-
ւոյն Ս. Աստուածածին վանքին մէջ:

Վարագայ վանքն (ի վան) Որբանոցի
վերածուեալ է Հոգաբարձութեան մը մեղմով,
որ յանձն կ'առնէ իւրաքանչիւր որբի սը-
նունը, հագուստ ու դաստիարակութիւնը հո-
գայ տարեկան 5 ուկիով, Պատրիարքարանի
հսկողութեան տակ:

Ի Կ. Պոլիս, օրաւագոյն օրիորդ մը՝ հայ
հռոմէական անձնաւորութեան մը հետ մեր
Ս. Պատրիարքին ներկայանալով, տրամադրու-
թիւն յայտնեալ է իր սեփական միջոցներով
Որբանոց մը հաստատել հայ տղայներու հա-
մար:

Եւ ասով՝ վերջին մէկ շարքուն մէջ
առնուած տեղեկութիւններն են միայն: Ա-
միսներէ ի վեր, Կ. Պոլսոյ, գաւառներու ու
երուսաղեմի հայ գաղութներու մէջ կատար-
ուած հանգանակութեան ու հետզհետէ գոր-
ծադրութեան դրուող ծրագիրներուն յիշա-
սակութիւնը երկար ցանկ մը պիտի կազմէր
որուն մէջ, դժբաղդաբար, իր տեղը յունի
սակաւիկ եգիպտոսի հայութիւնը:

Այս ազգային-մարդասիրական գործին
օգնելու տեսակողութիւնը անգամ մը եւս շեշ-
տելու չենք վարանիր, Առաջնորդարանի ու
կարող ազգայիններու յորջ ուշադրութիւնն
հրաւիրելով:

Մենք այնպէս կը հաւատարմեմք չա-
յասանի հպարտաւոր որքանոն նուիրուած
պաշտպանութեան ու բարեարարութեան մէջ
իրենց մասնակցութեան բաժնին ունենալ
փառապաշտելու չեն պակսիր հոս. ու սիրա-
յոծաւ նուիրաստութիւններ պիտի յայտնեն
իրար: Էականը՝ նախաձեռնութիւն մը
ստանձնել ու նուիրահաւաստեալ գործը կազ-
մակերպելն է:

* * *

Այս տղերք գրուած էին արդէն, երբ
գոնութեամբ ինկացանք Յանձնաժողովոյ ա-
ռաջին նիստին արդիւնքը գոր կը հրատարա-
կենք Ազգ. Լուրերու բաժնին մէջ, ամեն
յայտողութիւն մաղթելով:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Ի Կ. ՊՈԼԻՍ

Տեղի Նիստի թղթակիցը կը հեռագրէ
թէ զինուորական կուսակցութիւնը բռնուի ճի-
գեր կ'ընէ Կ. Պոլսոյ մէջ՝ իսլամ ժողովուր-
դին ազգային զգացումը գրգռելու համար:
Պատերազմական երգեր, թուրք զինուորներուն
քաջագործութիւնները պատմող յայտարարու-
թիւններ կը փակցուին փողոցներու անկիւնը,
պատերուն վրայ: Քանի մը օր առաջ հրապա-
րակ հանուեր է օսմ. կայսրութեան մէկ նոր
քարտէսը որուն մէջ Թուրքիան Թուրքիոյ մաս
նշանակուած էր: Այս քարտէսին կցուած են՝
վերջին պատերազմին մէջ նշանաւոր հանդի-
սացած թուրք զօրավարներուն պատկերները:
Ժողովուրդին մէջ տիրող յուզման վրայ

կարելի է գաղափար կազմել հետեւեալ դէպ-
քէն:

Դեռ պահանջարկը չունի հոգաբարձու-
նորդ օրը, քանի մը հարիւր թուրքեր համա-
խմբուած էին Թուրքիոյ պաշտօնատան շուր-
ջը, դեռ պահանջներուն վրայ յարձակելու համար՝
անոնց դուրս ելած պահուն: Սակայն սխալ
ժամ ընտրած էին, այնպէս որ դեռ պահանջը
չատնից իրենց տեղը դարձած էին՝ երբ խու-
ժանը դուրսը կը սպասէր: Հետեւեալազօրաց
գումարտակ մը և հեծելազօրքեր հարկադ-
րուեցան միջամտել՝ բազմութիւնը ցրուելու
համար:

Միւս կողմէ, Կ. Պոլսէ կը հաղորդեն թէ,
Դուռը տեղի տալով Տէրութեանց զիտողու-
թիւններուն՝ Ձիվէր փաշային Երուսաղէմի դի-
նուորական հրամանատար անուանուելուն դէմ
(որ Մարաշի Հայոց կոտորածին առթիւ ամ-
բաստանուած էր) Սուրիական Տրիպոլիսի փոխադ-
րեց զայն, ու անոր տեղ Երուսաղէմի զինու-
որական հրամանատար կարգեց Հաճի Իսկէթ
փաշան:

—Կ. Պոլսոյ Մալիմար թերթը, որ պա-
շտին օրկան կը նկատուի, ծանուցել է թէ
Թուրքիոյ արտասովոր դատարանին կողմէ յան-
ցաւորներու նկատմամբ տրուած վճռագրերը
Թէմիզի (cassation) ենթակայ չըլլալով, ամ-
բողջութեամբ Սուրիական մատուցած են:

ՅՈՐԴԱՆԻ ՀԱՆԴԷՍՆԵՐԸ

Վիզիթորիա թագուհւոյն յորջեանի ա-
րարողութիւնը վերջացան հոյակապ նաւահան-
դէսով մը որ տեղի ունեցաւ շաբաթ օրը ի
Բօրթոմաթ, 1633 անդլիական մարտանաւերու
և 15 օտար զրահաւորներու մասնակցութեամբ:
Օղբ գեղեցիկ էր և հանդէսը կատարուեցաւ
մեծ կանոնաւորութեամբ: Կալէսի իշխանը
Վիքորիա-Ալպէրք արքայական զօսանաւով
որուն կը հետեւէին սուրհանդակ-շողենաւնե-
րով՝ յորջեանին հրաւիրեալ պաշտօնական
անձնաւորութիւններն ու Խորհրդարանի ան-
դամները (յորտէյն ու երեւոյթները) աչքէ
անցուց համախմբեալ նաւատորմը: Ն.Ա. Բարձ-
րութիւն ու շունուեցաւ թնդանօթի հար-
ուածներու արձակմամբ և նաւաստիներուն
կեցցենքով: 23 միւս երկայնութեամբ տեղ,
զոր բռնած էին մարտանաւերը, հինգ կարգի
վրայ:

Դիշերը սեղան մը տրուեցաւ Բօրթոմաթ-
թի քաղաքապետական պաշտօնատան մէջ,
ի պատիւ Կալէսի իշխանին և իշխանուհւոյն,
ժողովակներուն և բոլոր հրաւիրեցոյ: Համա-
կրպից բաժակաճառեր արտասանուեցան:

Նախորդ իրիկունն ալ Ուէսթմինսթըրի
դքսուհին շքեղ պարահանդէս մը տուած էր
որուն հրաւիրուած էին նաեւ Անգլիոյ գաղ-
թային երկիրներու նախարարները:

—Լոնտոնէն, երկուշաբթի օրուան թուա-
կանով հեռագիր մը կը հաղորդէ թէ, Թա-
ղուհին չլինալով առանձին առանձին պատառ-
խանել շնորհաւորական անհամար հեռագրե-
րուն, մամուլին միջոցաւ արտայայտել է իր
անկեղծ շնորհակալեքը՝ համալրանալու ու ազ-
նուութեան սրտաշարժ ցոյցերուն համար:

—Պ. Կլաւտիմ Թագուհւոյն յորջեանը
տանց Հալոլարտընի դղեակին մէջ, ընտա-
նեկան հանդէսով մը որուն հրաւիրած էր 1200

մանուկներ: Ծերունի դիւանագէտը պարա-
գային յարմար սիրուն բանախօսութիւն մը
ուղղեց անոնց և իւրաքանչիւրին բաշխեց օր-
ուան տօնին ի պատիւ պատրաստուած մի-
տաներ ու... շաքարեղէն:

ԹՈՒՐԿԻԱ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆ

Հոշտութեան կնքման համար արտայայ-
տուած ակնկալութիւններն ի դերեւ ելան,
գէթ առ այժմ: Շարաթէն ի վեր անցաւ չորս
օր ու տակաւին չի լսեցինք որ դեռ պահանջան
բանակցութիւնները նոր քայլ մը առած ըլ-
լային: Մինակ, անոնց կողմէ կարգուած ել-
միտական մասնախումբը սա եղբակալութեան
յանդեր է թէ Յունաստանի կողմէ վճարելի
պատերազմական տուգանքը չի կրնար չորս
միլիոն օսմ. ոսկին անցնել: Թուրքիա Թեոա-
զիոյ քանի մը գաւառները կը պահանջէ:

Միւս կողմէ, հետզհետէ վրդովիչ լու-
րեր կը հասնին Կիւէտէն: Սրբաւայի միջադէ-
պեր անպակաս են ամեն օր և օտար ծովա-
կանները հարկադրուել են զօրք զրկել ի հիւ-
րաբէզրա:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսէ առնուած լուրերէ կ'իմանանք թէ
Ազգ. Վարչութիւնը հաստատել է Տ. Յակոբ
Աշոտ Ծ. Վարդապետի ընտրութիւնն՝ իբրեւ
առաջնորդական տեղապահ եգիպտոսի:

Որքերու Յանձնաժողովն երկուշաբթի օրը
ամբողջական նիստ մը ըրաւ առաջն. տեղա-
պահ Հօր նախագահութեամբ: Բացակայ էր
միայն Տիար Մկրտիչ Մանուկեան որ հրաժա-
րական զրկած էր:

Առաջիկ տրուած որոշումները:
Յանձնաժողովը մնայուն գործի մը ձեռ-
նարկելու փափագով՝ եղիպտոսեակ կարող և
բարեւէր ազգայիններուն պիտի դիմէ և առ-
րեկան որոշեալ գումար մը ստորագրել տայ:
Այս կերպով ձեռք բերուած գումարով խումբ
մը օրքերու մեղմելի, բնակութեան և դաս-
տիարակութեան հոգը պիտի ստանձնէ՝ իր
ընտան մէկ հաստատութեան մէջ և իր յար-
մար գաւառ եղանակաւ: Պաշտպանեալ որ-
քերը պիտի նկատուին իբրեւ օրք եգիպտոսի
գաղութին եգիպտոսի:

Յանձնաժողովն՝ իր աշխատութեան տահ-
ման ընդարձակուած տեսնելով՝ որոշեց ա-
ռաջարկել Գաղ. Ժողովին որ իր անդամաց
թիւն 5էն 8ի բարձրացուի և անդամակցու-
թեան հրաւիրուին, Տնայք՝

- Երուսաղ. Աղաթան
- Յովհաննէս Կարգեալ
- Յովհաննէս Տէրվիւեան
- Ստեփան Եփրեմեան

Յանձնաժողովն օգտակար դատեց նաեւ
տիկնանց օժանդակ մասնախումբի մը գոր-
ծակցութիւնն, որուն կազմութեան համար
պիտի դիմուի Տիկն Մ. Մարկոսի պէջի:
Տիկնանց Մասնախումբին պաշտօնը պիտի ըլ-
լայ՝ ոչ-գրական նուէրներ հաւաքել (հա-
գուտ և այլն) և Յանձնաժողովին յանձնել,
որքերուն հասցունելու համար:

Առաջնորդական տեղապահ Հայրը որին
որոշումները ծանուցանելով Աղեքսանդրիոյ

— Յիսուսը հինգ հազար քիլոմէթր տեղ քարածեմ, ըստ մեզի :

Իր ճամբորդութիւնները 1892ին սկսաւ : Առաջինը Բարիդէն Վարչապետ, Բեդրապուրիի և Մոսկուայի ճամբով, և Զրաճառ դարձաւ Վիեննա և Յիւրիս հանդիպելով :

1893ին Նիւ-Եորք գնաց շոգենաւով և անկից հետոյ Շիբաօ անցաւ, ամբողջ Բանալվանիան և Քանադան տեսնելէ վերջը Բարիդ եկաւ . . . Հոլանտայէն :

Տարի մը ետքը Ալճէրիան և Թունուզը պտտեցաւ ոտքով :

95ին Պոլիս գնաց, Մոն-Պլանէն, Վենետիկէն, Թրիէսթէն, Պոնիֆայէն, Պէրլատէն և Սոֆիայէն անցնելով :

Հայաստան գնաց 96ին այն պահուն ուր աշխարհամասթ և դառնաղէտ դէպքերը տեղի կուտային և վերադառնալու Բարիդ եկաւ Անտիոք, Հալէպ և Իսկէնդերուն այցելելէն վերջը :

Վերջին ճամբորդութիւնը Եգիպտոսինը եղաւ զոր գուցէ չի կրնայ շարունակել :

Վերջին պահուն կիսանայր թէ ֆրանսական հիւպատոսարանը իր հայրենիքը պիտի դարձնէ այդ . . . տարի դիւցազնը :

ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԳԱՀԻՐԵՒ

Ա Ջ Դ

Պատիւ ունինք ծանուցանել ընթերցասէր հասարակութեան թէ ընկերութիւնս բացած է մի բաժանորդագրութիւն իւր մասնադարանի 400է աւելի գրեանց ընթերցման համար հետեւեալ պայմաններով .

Ա.— Ամէն անհատ որ կուզէ ընթերցատունէս մէկ գիրք առնուլ ընթերցանութեան համար, կը վճարէ ամսական 5 դր ռոյ, աւած թուականէն սկսեալ և ընկերութեան դանձու իր աւանդ կը թողու գրքին մէկ ու կէս անգամը, գիրքը վերադարձուցած միջոցին դայն վերադառնալու պայմանաւ :

Բ.— Այն որ չնորոգէր իւր բաժանորդագրութիւնն, ամիսը լրանալէ յետոյ մինչեւ 15 օր, ընկերութիւնը կորսուած կը նկատէ նոյնին տրուած գրքին և կ'իւրացնէ ի փոխարէն թողուած աւանդի գումարն :

Գ.— Մէկ անձ կրնայ մէկ ամսոյ միջոցի մէջ քանի մը գրքեր առնուլ պայմանաւ որ առաջին աւածը վերադարձնէ ուրիշ մը ստանալու համար :

Դ.— Գործ. Ժողովն իրեն կը վերապահէ կարգ մը գրեանց դուրս տալը արգիլելու իրաւունքը :

Ե.— Ընկերութեան անդամք ազատ են Ա. և Բ. յօդուածոց արամադրութենէն, և կրնան ստանալ ուղած գրքերին առանց ու ե վճարման, դայն առ առաւել մէկ ամիսէն վերադարձնելու պայմանաւ :

Դիմել առ Տեսար Մ. Թուրքեան, Տնօրէն Ընթերցատանս, ամեն օր կէս օրէ յետոյ ժամ 4—6 :

ԳՈՐԾԱԴԻՐ ԺՈՂՈՎ

ՏՕՔԹՕՐ ԼՕՆԿ

ՏՐ. ԼՕՆԿ, մասնագէտ կանանց, ստամոքսի, մորթի և ջրային հիւանդութեանց : Կրնողունի իրեն դիմող հիւանդները Մեզօն Զահար, Շեքիրս Զօրէի նիւղ դէմը. ամեն օր առաւօտեան ժամը 10էն 12 եւ կես օրէն վերջ 3էն 5: Բոլոր վկայեալ աղբաւթն ձեռք կը դարմանուին :

ԲԻԻԶՆԵՐ ՓԱՓԱՋԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Պատիւ ունինք ծանուցանել արգոյ հասարակութեան թէ Պազար Մուրուրի մէջ խանութ մը բացած են ուր ընտիր տեսակէ և ծեծուած խահլէ պիտի ծախուի սովորական գներով :

Այս խանութին մէջ կան նաեւ զովացուցիչ ըմպելիներ :

Le Gérant: HENRY SAKAKINI

Տպագրութիւն ՓԱՐՈՍ Իրաքի

Յ. ԵՒ Կ. ՄԱԹՈՍԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ԳԱՀԻՐԵՒ ԵՒ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ ԾԽԱՆՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՆԵԹԻ

ՍԵՄԱԳՈՅՆ ԳՈՐԾԱՐԱՆ

ԸՆԳՐԱՆՈՒՐ ՄԵՐԱՆՈՅ «ՇԱՐԱ ԱԳԱՍ»

Խառն Դասարաններու դիմ :

ԸՆԹԱՑԻԿ ԴԻՆ ՍԻԿԱՆԵԹՆԵՐՈՒ

Սիկարէթ Ռուսեալ 1000 հատը 2 1/2 Անգ. ոսկի

"	Խըտիվեալ	"	"	2	"	"
"	Պալատական	"	"	1 1/2	"	"
"	Պօհճա	"	"	1 1/4	"	"
"	Նաթիւրէլ	"	"	1	"	"
"	Պօռ	"	"	20	Փրանք	"

ՀՐԱՆՏ ԱՋԱՏԵԱՆ

ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՑԱՐԱՐ

Հայ եկեղեցւոյ գէմ բացած խանութին մէջ ամենէն զգուարահանները գոհայնելու

հղանակաւ կ'արդուէ շապիկներ և այլն սովորական գներով :

Ուզողներու համար լուսարարութեան հիւղ մ'ալ աւելցուած է, ուր յաճախողներուն ճերմակեղէնները զատ զատ լուսաւ գնահատելի գրութիւնը հաստատած է :

Ի գիւրոթիւն յաճախողաց ճերմակեղէնները ինք անձամբ պիտի առնէ տուններէն և պիտի վերադարձնէ :

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ, ՈՅԺ, ԿՈՐՈՎ

ԴԱՐՄԱՆ ԱՆԱՐԻՆՈՒԹԵԱՆ, ՏԿԱՐՈՒԹԵԱՆ, ԵՒ ՋՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ

ԼԸ ՊԻՕԺԵՆ

Միակ սնունդ Գործող հիւանդներու համար, կազդուիչ աքի, շնչառական գործաւանդներու, առեան եւ ջրային հիւանդութիւններու :

Կր յանձնարարուի հեծեյանի գործառններուն : Մեանցիլի դեղ ոյժի պիտի ունեցողներուն համար :

ԿԻ ԴՏՆՈՒԻ ԱՄԵՆ ԴԵՂԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

Մերաւնոյ. — Ա. ՄԱՆՏՈՅԻԱՒ ԱՆԿՐՈ—

Եգիպտական դեղարանը Էգպէիէ, Դահիւրէ :

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵԻՆՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԵՒ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԴԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		Խառն		Սիկարէթ		Կէս ուղ.		Սիկարէթ		Կէս ուղ.		Խառն		Սիկարէթ		Կէս ուղ.		Սիկարէթ		Կէս ուղ.	
		1,2,3,4,5	6,7,8,9,10	1,2,3,4,5	6,7,8,9,10	1,2,3,4,5	6,7,8,9,10	1,2,3,4,5	6,7,8,9,10	1,2,3,4,5	6,7,8,9,10	1,2,3,4,5	6,7,8,9,10	1,2,3,4,5	6,7,8,9,10	1,2,3,4,5	6,7,8,9,10	1,2,3,4,5	6,7,8,9,10	1,2,3,4,5	6,7,8,9,10
Գահիրէ	մեկ.	4 45	—	7 —	—	8 15	—	9 30	—	3 30	—	4 45	—	7 15	—	11 —	—	—	—	—	—
Պէնհա	»	8 —	—	7 49	—	9 32	—	10 15	—	4 47	—	5 29	—	8 32	—	12 35	—	—	—	—	—
Թանիս	»	11 28	—	8 30	—	10 30	—	10 55	—	5 45	—	6 7	—	9 30	—	1 44	—	—	—	—	—
Թանիս	մեկ.	11 48	6 —	8 34	—	11 15	—	11 —	—	6 26	—	6 11	—	—	—	1 54	—	—	—	—	—
Տանիս	»	3 10	7 34	9 41	—	12 49	—	11 58	—	7 59	—	7 7	—	—	—	3 51	—	—	—	—	—
Աղեքսանդրիա	մեկ.	6 25	9 15	10 45	—	2 30	—	1 —	—	9 40	—	8 7	—	—	—	5 50	—	—	—	—	—

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅԻ ԳԱՀԻՐԵՒ ԴԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		Սիկարէթ		Կէս ուղ.		Սիկարէթ		Կէս ուղ.		Սիկարէթ		Կէս ուղ.		Սիկարէթ		Կէս ուղ.		Սիկարէթ		Կէս ուղ.	
		1,2,3,4,5	6,7,8,9,10	1,2,3,4,5	6,7,8,9,10	1,2,3,4,5	6,7,8,9,10	1,2,3,4,5	6,7,8,9,10	1,2,3,4,5	6,7,8,9,10	1,2,3,4,5	6,7,8,9,10	1,2,3,4,5	6,7,8,9,10	1,2,3,4,5	6,7,8,9,10	1,2,3,4,5	6,7,8,9,10	1,2,3,4,5	6,7,8,9,10
Աղեքսանդրիա	մեկ.	—	7 —	7 15	—	9 —	—	9 20	—	2 30	—	4 15	—	6 15	—	11 —	—	—	—	—	—
Տանիս	»	—	8 6	8 58	—	10 2	—	12 14	—	4 13	—	5 15	—	8 6	—	1 9	—	—	—	—	—
Թանիս	»	—	9 12	10 28	—	11 —	—	2 39	—	5 43	—	6 10	—	9 40	—	2 56	—	—	—	—	—
Թանիս	մեկ.	6 15	9 16	11 20	—	11 5	—	2 49	—	6 30	—	6 14	—	—	—	3 6	—	—	—	—	—
Պէնհա	մեկ.	7 18	9 59	12 23	—	11 46	—	4 43	—	7 33	—	6 52	—	—	—	4 25	—	—	—	—	—
Գահիրէ	մեկ.	8 30	10 45	1 35	—	12 30	—	6 25	—	8 45	—	7 35	—	—	—	5 50	—	—	—	—	—

ԳԱՀԻՐԵՒ-ՍԻԻԷՋ

ՊԵՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԻԷՋ-ԳԱՀԻՐԵՒ

ԿԱՅԱՐԱՆԻ		Ս.ՌԱԲՈՏ	ԵՐԵՎԱՆ	ԿԱՅԱՐԱՆԻ		Ս.ՌԱԲՈՏ	ԵՐԵՎԱՆ
Գահիրէ	մեկ.	11 40	7 —	Սիւնգ (բարաթ)	մեկ.	9 50	—
Պէնհա)	ժամ.	12 28	7 48	» կայարան	»	—	3 30
)	մեկ.	12 33	7 53	Խառնիկ	»	1 20	7 5
Զափաղիկ)	ժամ.	1 34	8 54	Զափաղիկ)	ժամ.	3 7	8 53
)	մեկ.	1 44	9 4	)	մեկ.	3 17	9 3
Խառնիկ	մեկ.	3 40	1 —	Պէնհա)	ժամ.	4 13	9 47
Սիւնգ կայարան	ժամ.	—	5 —	)	մեկ.	4 17	9 4
Տօք (բարաթ)	ժամ.	6 55	—	Գահիրէ	ժամ.	5 5	10 35